ԱՐՏԱԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՇԽԱՐՀԱԶՈՐԱՅԻՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՁՈԿԱՏԸ

Մինչև տասնիններորդ հարյուրամյակի առաջին քառորդը Հայաստանը գտնվում էր սուլթանական Թուրքիայի և շահական Պարսկաստանի տիրապետության տակ: Զավթելով հայոց երկիրը, նրանք հաստատել էին իրենց արյունոտ տիրապետությունը և մասնատել այդ հնագույն ժողովրդին՝ նրա նկատմամբ կիրառելով ամենավայրենի ազգային ու կրոնական, ձուլման ու խտրական քաղաքականություն, որպիսին լուրջ վտանգ էր հանդիսանում հայ ժողովրդի ֆիզիկական գոյության հարատևման համար:

Դեռևս տասնչորսերորդ դարի առաջին կեսին Թուրքիան և Պարսկաստանը երկարատև ու ավերիչ պատերազմներ էին մղում միմյանց դեմ՝ Հայաստանին տիրելու համար: Այդ պատերազմները վերջացան 1639 թ. գարնանը:

Նրանք 1639 թ. մայիսի 17-ին Կարսե-Ցիրինում պայմանագիր կնքեցին և Հայաստանը բաժանեցին միմյանց միջև: Արևելյան մասը զավթեցին պարսիկները, իսկ արևմտյանը՝ թուրքերը: Երկատված Հայաստանը դարեր շարունակ իր վրա էր կրում Մերձավոր Արևելքի այդ երկու բռնապետությունների ծանր լուծը՝ միշտ դառնալով ավերիչ զինաբախումների ու պատերազմների բեմահարթակ:

Այդ մասին Խաչատուր Աբովյանը գրում է.

«... Ինչ ուզում են, էն են անում: Դատաստան չկա, իրավունք չկա...

Աղջիկն ասես, քաշում էին, տղեն ասես՝ տանում թուրքացնում, հավատից հանում, շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նահատակում...»[1]:

Սոցիալ-քաղաքական ճնշումներն ու հալածանքները հայ ժողովրդի լայն զանգվածներին ու նրա առաջադեմ հայացքների տեր շատ մարդկանց մղում էին ելք որոնելու, այդ անտանելի կացությունից դուրս գալու և ազատագրություն ձեռք բերելու համար:

Հայ ժողովրդի անցած դարաշրջանի ողջ կյանքի ընթացքը մեր հայրենասեր գործիչներին հանգեցրեց այն հաստատ համոզման, որ ստեղծված կոնկրետ պատմական իրադրության պայմաններում թուրք և պարսից բռնակալների տիրապետությունից կարելի է ազատվել և ձեռք բերել ազգային ապահովություն միմիայն Ռուսաստանի օգնությամբ ու հայ ժողովրդի անմիջական գործնական մասնակցությամբ:

18-րդ դարի վերջերին և 19-ի սկզբին ավելի է ուժեղանում Անդրկովկասի և հատկապես հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը պարսկական ու թուրքական բռնակալների դեմ:

Դրան ընդհանուր առմամբ նպաստում էր նաև ռուսական ցարիզմի արտաքին քաղաքական ուղղությունը Արևելքի նկատմամբ, որով նա ձգտում էր իր դիրքերն

[1] **Խաչատուր Աբովյան**, Երկերի լիակ. ժող., հ. 3-րդ, էջ 38;

ամրապնդել Սև ու Կասպից ծովերի վրա: Դրա երաշխիքը հանդիսանում էր Կովկասի նվաճումը Ռուսաստանի կողմից և նրա առաջխաղացումը դեպի Անդրկովկաս: Նման իրավիճակը միանգամայն համապատասխանում էր հայ ժողովրդի իղձերին ու ձգտումներին՝ ազատագրվելու պարսից խանների ու թուրք փաշաների ստրկությունից:

1801 թ. սեպտեմբերի 12-ի ցարական կառավարության մանիֆեստով պաշտոնապես ձևակերպվեց Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին, որի հետ միասին կամավոր կարգով Ռուսաստանի տիրապետության տակ անցավ Լոռին, Փամբակը, Ղազախ-Շամշադինը, Քարվանսարայի (Իջևան) և Հայաստանի հյուսիսի մի բանի այլ շրջաններ: Այս կարևոր հանգամանքն ավելի ոգևորեց հայ ժողովրդին և արագացրեց նրա մերձեցմանը ռուս ժողովրդի հետ:

1604 թ. սկսվում է ռուս-պարսկական պատերազմը: Մինչև 1813 թ. ռուսական բանակը մի շարք փայլուն հաղթանակներ է տանում Անդրկովկասում և պարսկական բռնապետությունից ազատագրում Անդրկովկասի մեծ մասն ու Դաղստանը:

1813 թ. հոկտեմբերին Ղարաբաղի Գյուլիստան գյուղում կնքվում է հաշտության պայմանագիր, որով Ռուսաստանին են միացվում Արևելյան Վրաստանը, Գանձակի, Ղարաբաղի, Թալիշի, Շաքիի, Շիրվանի, Բաքվի, Ղուբայի, Դերբենդի խանությունները ու Դաղստանը:

Այդ կարևոր ակտը առաջադիմական խոշոր նշանակություն ունեցավ հայ, վրացի և ադրբեջանցի ժողովուրդների համար:

1826 թ. հուլիսին վերսկսվում է ռուս-պարսկական պատերազմը և Ռուսաստանի հաղթանակով այն ավարտվում է 1828 թ. փետրվարին: Փետրվարի 10-ին, Պարսկաստանի Թուրքմենչայ գյուղում կնքված ռուս-պարսկական հաշտության պայմանագրով, Պարսկաստանը մեկընդմիշտ հրաժարվում է Արևելյան Հայաստանից, Վրաստանից, Ադրբեջանից, Դաղստանից, որոնք անցնում են Ռուսաստանի տիրապետության տակ և միացվում նրան:

Սա սատմական մեծ իրադարձություն էր և ունեցավ առաջադիմական խոշոր նշանակություն: Դա կարևոր շրջադարձ էր հայ ժողովրդի կյանքում, որով հայ ժողովրդի մի հատվածը ընդմիշտ ազատագրվեց պարսկական դաժան տիրապետությունից, դրանով իսկ կանխվեց նրան սպառնացող ֆիզիկական ոչնչացման վտանգը, նպաստավոր պայմաններ ստեղծվեցին նրա կյանքի զարգացման համար բոլոր բնագավառներում:

Ռուս-պարսկական պատերազմների ընթացքից մինչև նրա հաղթական ավարտը հայերը և Անդրկովկասի մյուս ժողովուրդները մեծ օգնություն ցույց տվին ռուսական բանակին՝ անձնազոհ կռիվներ մղելով նրանց շարքերում և պարտիզանական ու աշխարհազորային կամավորական ջոկատներում:

Ռուս-պարսկական 1804—1813 թթ. և 1826—1828 թթ. պատերազմների ընթացքում բազմաթիվ հայրենասերներ ընկան փառքով մարտի դաշտում: Նրանց մեջ իրենց արժանի տեղն ունեն Մելիք Աբովի որդի Ռոստոմ Բեկն ու Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանը՝ իրենց կազմակերպած կամավորական-աշխարհազորային ջոկատներով:

Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանը ծնվել է 1773 թ. Շամշադինի շրջանի (գավառի) Հին Հախում գյուղում (այն կոչում էին նաև Վարդապետի գյուղ), հոգևորականի ընտանիքում:

Սկզբնական կրթությունն ստացել է Նոր Վարագա վանքի վարժարանում, ապա շարունակել է Թիֆլիսում: Ավարտելով ուսումը ստացել է վարդապետական աստիճան ու վերադարձել հայրենի գյուղ, որտեղ հոգևոր աշխատանքի հետ միասին զբաղվել է հայ պատանիների կրթության գործով: Նա իր արտակարգ ընդունակություններով ու գործունեությամբ շուտով աչքի է ընկնում ու լայն ճանաչում գտնում և, իբրև վարձատրություն իր գործունեության, ստանում է շուտով եպիսկոպոսի աստիճան: 1803 թ. նա արդեն ճանաչված եպիսկոպոս էր:

Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանը հիշտ ըմբռնեց ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունը և հայ ժողովրդի ազատագրության հիմնական հույսն ու գաղափարը կապեց Ռուսաստանի հետ: Լինելով քաղաքական առաջավոր մտքի ու գաղափարի տեր մարդ, մինչև Ռուսաստանի կովկասյան արշավանքը, նա բացատրական լայն աշխատանք է տանում պարսկական ու թուրքական լծի տակ հեծող հայ, վրացի ու ադրբեջանցի ժողովուրդների մեջ՝ սկսած Բորչալուից մինչև Ղարաբաղ և վճռականապես թելադրում, որ նրանք բարոյական ու գործնական մեծ օգնություն ու նվիրվածություն ցույց տան ռուսական հրամանատարությանն ու զորքերին, որոնք առաջ էին շարժվում դեպի Անդրկովկաս:

Քառորդ դարից ավելի նա հագավ չերքեզի հագուստ, սուրը վերցրեց մի ձեռքը,

խաչը՝ մյուս, և անողոք կռվի ելավ պարսից բռնակալների դեմ, որոնք հարյուրամյակներ շարունակ կողոպտում, կեղեքում ու հոգեմաշ էին անում հայ ժողովրդին:

Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանը պատերազմի սկզբից ոտքի հանեց Ղազախի, Շամշադինի, Քարվանսարայի և Բորչալուի հայ բնակչությանը՝ ընդդեմ պարսկական բռնապետության ու նրա ինքնիշխան խաների:

«Պատերազմի առաջին իսկ օրից Բորչալուում, Ղազախում և Շամշադինում պարսիկ խաների հրոսակների դեմ քաջաբար կռվում էր Գրիգոր Մանուչարյանի 500 հայ հեծելազորներից կազմված աշխարհազորային ջոկատը...»[2]:

1803—1804 թթ. Ղազախի ու Շամշադինի հայ երիտասարդ հինգ հարյուր հոգուց բաղկացած կամավորական-աշխարհազորային հեծյալ-մարտական այս ջոկատը միանում է ռուսական առաջապահ զորքերին, որոնք գեներալ, իշխան Պավել Դիմիտրևիչ Ցիցիանովի հրամանատարությամբ արշավում էին դեպի Գյանջա քաղաք՝ այնտեղ ամրացած Ջավադ-խանին և պարսիկ զգլբաշներին դուրս մղելու համար:

Այդ ջոկատը մեծ արիություն ու հերոսություն ցուցաբերեց Գյանջայի տակ տեղի ունեցած նշանավոր ճակատամարտում և ջախջախիչ հարված հասցրեց թշնամու մեծաթիվ զորքերին:

«... Գեներալ Ցիցիանովը, իր դիտակետից նկատելով Մանուչարյանի ջոկատի հերոսական ճակատամարտը, որը այնքան էլ վստահություն չուներ նրանց նկատմամբ, բարձր գնահատեց ջոկատի մարտական գերազանց գործողությունն ու շտապ հասնելով ռազմի դաշտ, շնորհավորեց նրանց հաջողությունները և պարգևատրեց ջոկատի շատ անդամների ու նրա հրամանատար Գր. Մանուչարյանին՝ ամրացնելով նրա կրծքին «Սուրբ Գեորգևսի 4-րդ աստիճանի զինվորական խաչ» շքանշանը, հանձնելով նրան 300 ռուբլի թոշակ նշանակելու փաստաթուղթ»[3]:

Ջոկատը շատ կարևոր ու խոշոր դեր կատարեց Շամշադինի և Բորչալուի գավառների հայկական ու ադրբեջանական շատ գյուղեր պարսկական հրոսակախմբերի հարձակումներից և ավարառություններից պաշտպանելու գործում: Ջոկատը, ինչպես տրված է պատմական աղբյուրներում, շատ հաճախ խոր անցումներ է կատարել հակառակորդի թիկունքը և մարտի բռնվել նույնիսկ պարսկական կանոնավոր բանակի զորամասերի հետ և գերությունից ազատել բազմաթիվ հայ ընտանիքներ:

Գեներալ Գուդովիչի հրամանով 1808 թ. երևանյան արշավանքին ռուսական բանակի հետ միասին մասնակցում էր նաև կամավորական այդ հեծյալ ջոկատը, որը ամենուրեք ցուցաբերում է բարձր կարգապահություն և գերազանց կատարում իր վրա դրված մարտական բոլոր առաջադրանքները:

Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանի ջոկատն իր մարտական գործողություններով աչքի է ընկնում նաև Նախիջևանի ճակատամարտում՝ մարտի բռնվելով թվով գերակշիռ ուժերի հետ: Այստեղ վիրավորվում է ջոկատի հրամանատար եպիսկոպոսը և հազիվ ազատվում մահից, բայց մինչև իրեն դուրս բերելը ճակատի գծից, այդ վիճակով ղեկավարում է մարտը, որով ավելի է ոգևորում իր քաջերին:

Այդ և մի շարք այլ ճակատամարտերում ցուցաբերած արիության և հերոսությունների համար կամավորական ջոկատի շատ անդամներ և նրա հրամանատար Գր. Մանուչարյանն արժանանում են պարգևների, նույնիսկ կրկնապատկվում է նրա թոշակը: Այդ մասին Ա. Երիցյանը գրում է.

«Կոմսի (Գուդովիչի) առաջարկությամբ կայսրը առանձին հրովարտակով պարգևատրում է նրան «Վլադիմիրի» և «Աննայի» շքանշաններով և նշանակում 600 ռ. թոշակ...»[4]:

1819 թ. ամռանը Մանուչարյանը կատարում է շատ լուրջ և պատասխանատու հանձնարարություն:

Նա 40 կտրիճներով ճեղքում է թշնամու օղակը և Հաղպատի վանքում շրջափակված Եփրեմ կաթողիկոսի կյանքը փրկելով, նրան անվտանգ հասցնում Թիֆլիս քաղաք:

Ուշագրավ է Խրամ գետի մոտ՝ Բորչալուի դաշտում տեղի ունեցած ընդհարումը Մանուչարյանի փոքրաթիվ ուժերի և պարսիկների 300 հոգուց բաղկացած հեծյալ ջոկատի միջև:

Կաթողիկոսին տեղափոխելու ժամանակ պարսիկ զգլբաշները դարանակալ թաքրստոցներից հանկարծակի գրոհում են: Տեղի է ունենում սարսափելի մարտ՝ մեկը՝ երեքի դեմ: Հաղթելու հույս չկար: Գր. Մանուչարյանի ձին գնդակից սատկում է: Մա-

[2] Հայ ժող. պատմ., ակադ. հր. հատ. Երևան, 1974 թ., էջ 127:

[3] **Ալեքսանդր Երիցյան**, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կովկասյան հայքը 19-րդ դարում, էջ 244:

[4] **Ա. Երիցյան**, նույնը, էջ 245:

նուչարյանը չի վհատվում, նստում է ուրիշ ձիու վրա և կրկին գրոհում թշնամու վրա, այդ օրհասական մարտը տևում է կես ժամ: Մանուչարյանն իր քաջերով մեծ դժվարությամբ ճեղքում է պարսկական զորաշարքը և փրկում կաթողիկոսի կյանքը:

Այդ ժամանակաշրջանում Շամշադինի գավառում խռովություն էր սկսվել տեղական թուրքերի կողմից: Գեներալ Երմոլովի պահանջով Մանուչարյանը 500 հոգով Թիֆլիսից մեկնում է Շամշադին, Ղազախ և Սևանի կողմեր, ճնշում ապստամբությունը և գերությունից ազատում մի քանի հարյուր հայ ընտանիքների:

Մանուչարյանն իր ջոկատով, բազմաթիվ անգամներ ծանր կորուստներ պատճառելով թշնամուն, կարողացել է խլել մեծ թվով հայ և ադրբեջանցի ընտանիքներ, որոնց պարսիկները բռնությամբ տեղահան էին արել և որպես գերիներ տանում էին Պարսկաստան: Ազատելով նրանց, անվնաս հասցրել է իրենց հայրենի օջախները և ապահովել նրանց հետագա անվտանգությունը:

Ռուս-պարսկական պատերազմի առաջին շրջանում մղած մարտերի ժամանակ բավականին աչքի էր ընկել Մանուչարյանի աշխարհազորային ջոկատը և ձեռք էր բերել մարտական հարուստ փորձ:

Իսկ պատերազմի երկրորդ շրջանում (1826—1828 թթ.), երբ կովկասյան բանակն անցավ հակահարձակման, ռուս զորքերի հետ միաժամանակ հայկական այս ջոկատը մարտական ակտիվ գործողություններ վերսկսեց Ղազախ-Շամշադինից մինչև Արաքսի ափերը՝ մեծ կորուստներ պատճառելով հակառակորդի կանոնավոր բանակին:

Հակառակորդի դեմ ռազմական գործողություններ մղելուց բացի Գրիգոր եպիսկոպոսի գլխավորած ջոկատի օգնությունը կովկասյան հատուկ կորպուսին արտահայտված էր նաև այլ ձևերով:

«...Հարկ եղած դեպքերում նա հաջողությամբ պաշտպանում էր Թիֆլիս—Երևան ռազմա-ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող ճանապարհները, կապավորի դեր էր խաղում ռուս զորամասերի և գլխավոր հրամանատարության միջև, իսկ երբ Հայաստանում գործող զորամասերը նեղվում էին պարենի պակասությունից, Գր. Մանուչարյանի ջոկատն իր վրա էր վերցնում նրանց համար պարեն հաթաթելու դժվարին գործը»[5]:

Գյանջայի և Շամխորի ճակատամարտերից հետո Հասան խանը մտադրվում է մեծ ուժ բերել՝ Դիլիջանն ու Լոռին վերագրավելու համար: Այդ վտանգավոր պահին Դիլիջանի ձորի պաշտպանությունը հանձնարարվում է Մանուչարյանի ջոկատին, որը առանձին ոգևորությամբ ընդունում է այդ առաջադրանքը:

Եփրեմ կաթողիկոսի՝ գեներալ-ֆելդմարշալ Պասկևիչին գրած նամակից երևում է, որ 1827 թ. ամենավտանգավոր ժամանակ Գրիգոր եպիսկոպոսը պարսից սահմանից մոտ հազար թուրք տնտեսություններ է ետ վերադարձնում, որոնք ապստամբ աղալարների թելադրանքով գնում էին Պարսկաստանում բնակվելու:

Մանուչարյանն իր ջոկատով պահպանում էր նաև կարևոր անցուղիներն ու նանապարհները, ամենուրեք ունենալով պահնորդներ ու վստահելի տեղաբնակներ:

Նա չթողեց վերադառնալ պարսից Զոհրաբ խանին, որ իր զորքով ու աղալարներով մտել էր Շամշադինի Ամիրլախ գյուղ[6], և սրանով իսկ ռուսական սակավաթիվ ուժերին պայմաններ տվեց ջախջախելու պարսիկներին և ապստամբ աղալարների ջոկատներին: Տեղի ունեցած կռվի ժամանակ հակառակորդը ունեցավ մեծ կորուստներ, ապստամբ աղալարների մեծ մասը գերի վերցվեց ռուսների կողմից: Բացի այդ նա իր շամշադինեցի հայերով մեծապես օգնեց վրաց կամավոր զորքին՝ ջարդելու Աբիկ գետի մոտ պարսից Մահմադ Զաման խանին, և Շամշադինի ապստամբ աղալարներին:

Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանը հեզ ու համեստ մարդ է եղել, բայց երբ մտել է ռազմի դաշտ, եղել է խիստ համարձակ ու սարսափելի: Նա մեծ ուշադրություն էր դարձնում փոքրիկ սղնախների կազմակերպման վրա, որտեղ վարժեցնում էր իր քաջերին և գրոհներ կազմակերպում թշնամիների վրա: Շնայած այդ պատմական օրերից անցել է 150 տարուց ավելի, բայց և այնպես նրա և իր օգնականների ստեղծած սղնախները մինչև այսօր կոչվում են նրանց անունով, կամ ուղղակի կրում են «Սղնախ» անունը:

1826 թ. ամռանը խիստ վտանգավոր վիճակ է ստեղծվում: Երևանի խանի հրամանով Ղազախ-Շամշադին է գալիս պարսից զորապետ Նաղի խանն իր զորագնդով, որն օգնություն ստանալով տեղական աղալարներից ու դավաճան Ալեքսանդրից, սկսում է հայ և ադրբեջանցի բնակչությանը բռնությամբ տեղահանել՝

[5] Հայ ժող. պատ., ակադ. հր., հ. 5, Երևան, 1974 թ., էջ 141:

[6] Ամիրլախ գյուղը այժմ գտնվում է Ադր. ՍՍՀ Թովուզի շրջանում:

Պարսկաստան քշելու նպատակով: Այդ օրհասական պահին շտապ օգնության է հասնում հայ ազգի գեներալ Մադաթյանը (Մադաթով), իր հետ ունենալով 2000 ռուս և 300 վրացի հեծյալ զինվորներ: Մադաթովի զորագնդին է միանում Գր. Մանուչարյանի ջոկատը, որոնք միացյալ ուժերով ջախջախում ու դուրս են շպրտում պարսիկներին՝ կանխելով բնակչության տեղահանումը: Թշնամու որոշ զորագնդերի հաջողվում է փախուստի մատնել, սակայն նրանց հաջողվում է նաև նախօրոք գերված շատ ընտանիքներ տանել իրենց հետ: Այդ մասին կա մի հետաքրքիր տապանաքար, որի վրա արձանագրված է հետևյալը (տապանաքարը գտնվում է Բերդ գյուղի ս. Սարգիս եկեղեցու մոտ):

«ԿՊԱՏԿԱՆԻ ԱՅՍ ՏԱՊԱՆՆ ԹՈՎՈՒՋ ՂԱՎԱՅ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿՉԻ ՊԱՐՈՆ ԱՌԸՍՏԱԿԻՆ ՄԵԼԻՔՅԱՆՑ ՍԱ ԷՐ ԱՅՐ ՊԱՐԿԵՇՏ ԽԱՂԱՂԱԲԱՐ ԲԱՅՑ 1826 ԱՄԻ ԸՆԿԱՎ Ի ՄԵՋ ՏԱՐԱԲԱԽՏՈՒԹԵԱՆ, ԵՐԲ ԵԿՆ ՋՕՐԱԳԼՈՒԽՆ ՆԱՂԻԽԱՆՆ ՊԱՐՍԻՑ ԵՎ ԳԵՐԻՎԱՐԵՑԱՎ Ի ՍԱՐՆԵ ԵՕԹՆ ՀՈԳԻ ԵՎ ԻՆՔՆ ԱՇԽԱՏԱՍԵՐ ԳՈԼՈՎ ՄԻՆՉԵՎ ՇՐՋԵԼՈՎ ԱՐՏԱՍՈՒԱԼԻ ԱՋՕՔ Ի ՍԱՀՄԱՆՍ ՊԱՐՍԻՑ ԱՆԴ ԷԳԻՏ ԶԳԵՐԻՔՆ ԻՐ ԵՎ ԳՆԵԱՑ ԱՄԵՆ ՄԵԿՆ ՀԱՐՅՈՒՐ ԵՎ ՏԱՍԸ ՄԱՆԵԹ ԱՐԾԱԹԻ ԲԱՅՑ ԶԿՆԻ ԱՋԱՏԱՐՆ ԳԵՐԷԱՑ...»: Քարի մյուս երեսին գրված է. «1833 թ. մարտի 15 եղբայր Ավագի որդի Գրիգոր»:

Ղազախ—Շամշադինի և Քարվանսարայի շրջաններից ղզլբաշներին դուրս մղելուց հետո Մանուչարյանն իր ջոկատով անցնում է Բորչալու և ճնշում այնտեղ ծագած աղալարների և բեգերի խռովությունները: Այդ ժամանակ խռովություններ էին սկսվել նաև Ղազախ—Շամշադինում, որի պատճառն այն էր, որ խռովարարները չէին ուզում ենթարկվել ռուսական ուղղությանը: Գր. Մանուչարյանը տեղեկություն ստանալով այդ մասին, շտապ ետ է վերադառնում և ճնշում նաև այդ խռովությունը:

Այնուհետև ռուս զորքի, տեղական սրդնախների ու բնակչության ակտիվ օժանդակությամբ Գր. Մանուչարյանի քաջարի ջոկատը Շամշադինից դուրս է մղում այնտեղ դարանակալած Սարդար Հյուսեյին Ղուլի խանի զորքերին: Ապա կտրում են խուճապահար փախչող պարսիկների ճանապարհը և ազատում մի քանի հարյուր հայ ընտանիքների, որոնց թշնամին բռնությամբ տանում էր իր հետ:

1826 թ. սեպտեմբերի 3-ին Շամքոր գետի ափին, գեներալ Մադաթովի զորքերի հետ միասին, Մանուչարյանի ջոկատը մասնակցում էր պարսից Սարդար Ամիրխանի թվով գերակշիռ բանակի դեմ տեղի ունեցած ճակատամարտին, որտեղ ջոկատի շատ անդամներ և անձամբ նրա հրամանատարն աչքի են ընկնում մարտում: Թշնամին խայտառակ պարտություն կրելով դիմում է փախուստի, տալով 1000 հոգու գերի, 2000 սպանված, որոնց թվում նաև Սարդարը, դաշտում թողնելով զինվ. 4 դրոշակ և 2 թնդանոթ ու շատ զինամթերք:

Ալ. Մադաթովն իր առաջադրանքները գերազանց կատարելու համար կայսրից ստանում է գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում և ադամանդազարդ թուր՝ որպես պարգև:

Պատերազմի սկզբից մինչև նրա հաղթական ավարտը Գր. Մանուչարյանն իր մարտական հեծյալ ջոկատով բարձր պատասխանատվությամբ էր կատարում իր ռազմա-քաղաքական օգնությունը ռուսական հրամանատարությանն ու բանակին: Այդ մասին մանրամասն կարգով նկարագրել է Եփրեմ կաթողիկոսը գեներալ-ֆելդմարշալ Ի. Ֆ. Պասկևիչին գրած նամակում: Նա շատ գովեստով ու հիացմունքով է խոսում կամավորական ջոկատի և նրա հրամանատարի հայրենասիրական քաջագործությունների, նրանց կարգապահության, ռազմաճակատներում նրանց մարտունակության, գերազանց գործողությունների և բարձր արժանիքների մասին, ինչպես և նրանց նվիրվածության ու ժողովրդի նկատմամբ ունեցած հոգատարության վերաբերյալ:

Նամակի վերջում կաթողիկոսը գրում է. «... Նա այնքան համարձակ ու քաջ էր, որ մենակ էլ էր գործում, մինչև Թիֆլիս գրություն հասցնում Երմոլովին... Վերջապես ազատեց իմ կյանքը: Նա արժանի է իր օրինակելի ծառայություններով օգոստոսափառ արքայի առանձին ուշադրության:

Խնդրում եմ միջնորդել Գրիգորին պարգևատրելու: Ձերդ պայծառափայլության խոնարհ ծառայ և աղոթարար պատրիարք ամենայն հայոց Եփրեմ 1828 թիվ 4-յուլիս»[7]:

Փաստական աղբյուրներից պարզվում է, որ Մանուչարյանը շատ մտերիմ կապերի ու շփման մեջ է եղել հայ ու ռուս նշանավոր շատ գործիչների՝ Ալ. Գրիբոյեդովի, գեներալներ Երմոլովի, Ալ. Մադաթովի, գրող Խաչատուր Աբովյանի, Ներսես Աշ-

---

[7] Ա. Երիցյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և կովկասյան հայքը 19-րդ դ., էջ 149—150:

տարակեցու և ռուսական բանակի բարձրաստիճան հրամկազմի հետ:

Երևանի բերդի գրավումից հետո ռուսական կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար Պասկևիչն իր զորակայանում հրավիրում է բարձրաստիճան հրամկազմի և հոգևոր վերնախավի խորհրդակցություն՝ իրենց հետագա անելիքների մասին: Այդտեղ մասնակցում էր նաև Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանը, որը կրակոտ ելույթ է ունենում և ասում.

«Հոգևորականի աջ ձեռքում պետք է լինի սուրը, ձախում՝ խաչը, սրով պետք է ճանապարհ բացել, իսկ խաչով այդ ճանապարհով շարժվող զորագնդերին աղոթել...»:

Մանուչարյանը միշտ կանգնած է եղել աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպանության դիրքերում: Պատերազմի ընդմիջող տարիներին Մանուչարյանի խնդրանքով ու առաջարկությամբ և կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար, գեներալ Երմոլովի միջնորդությամբ ու օգնությամբ Ղազախ—Շամշադինի ու մի շարք այլ վայրերի գյուղացիությունն ազատվում է աղալարների կախումից և օրենքով ճանաչվում որպես պետական գյուղացիներ: Նրանք այլևս չէին ենթարկվում աղալարներին ու հրաժարվում են պարտավորություններ կատարելուց[8]:

Ռուս-պարսկական պատերազմի ժամանակ իրենց հայրենասիրությամբ և արիությամբ աչքի են ընկել կամավորական ջոկատի շատ մարտիկներ, որոնցից են՝ Հակոբ Փասոյանը, Լոլյասազանց Գրիգորը, Բեկու Քալանթարյանը, Գրիգոր Մելյանը, Սևունց Բոլին, Սավրունց Տեր Գրիգորը, Սոսի աղա Քալանթարյանը, Մելիք Հոհանջանը, որսորդ Խամսա Թունին, Առաքել Մելիքյանցը, Բրուտ Սարգիսը, Գր. Մանուչարյանի եղբայր Գալուստը, Սարգիս Լալիգեդցին, Սերգեյ (Սարգիս) Վարշամովը, Հովհաննես և Ադամ Ալիբեկյանները, բժիշկ Հովհաննես Բաղրամովը, Թադիբեկյանը, Արան և շատ ուրիշներ:

«Սրանց մեծ մասը պարգևատրվել են շքանշաններով, մեդալներով, թանկարժեք նվերներով ու զենքերով, իսկ ջոկատի հրամանատարը՝ «Ս. Գեորգևսկի», «Աննայի» և «Վլադիմիր» շքանշաններով և մի շարք մեդալներով ու ոսկեպատյան թրով»[9]:

---

[8] **Վարդան Պարսամյան**, Հայ ժող. պատմ., Երևան, 1960, պր. 7, էջ 31—33:

[9] **Վ. Պարսամյան**, Հայ. ժող. պատմ., Երևան, 1960, պր. 7, էջ 31—33:

1826 թ. Գրիգոր եպիսկոպոսի եղբայր Գալուստը գերի է վերցվում պարսից զորքի կողմից և տեղափոխվում Երևան: Հասան խանը որոշում է գլխատել նրան, բայց Նազի խանի միջնորդությամբ գերին ազատվում է հետևյալ պայմանով, որ Գալուստը վերադառնա Շամշադին, իր հայրենակիցներին համոզի, որ նրանք ետ կանգնեն Ռուսաստանի հետ համագործակցելուց, ազատագրական պայքարից ու պարսիկների դեմ կռվելուց, որի կատարման համար նրան տրվում էր չորս օր ժամանակ: Եթե չկատարեր խանի հրամանը, նրա գլուխը պետք է հազար կտոր արվեր: Գալուստը համաձայնվում է ու վերադառնում Շամշադին, ներկայանում Մադաթովին ու իր եղբորը, հաղորդում խանի որոշումը և զենք վերցնում ու դաժան կռվի ելնում պարսիկների դեմ: Հասան խանը լսելով Գալուստի երդմնազանց լինելու մասին, հրամայում է անպայման գտնել նրան և ներկայացնել իրեն: Նրա գլխի համար նշանակում է հազար ոսկի, իսկ կենդանի բերելու դեպքում՝ երկու հազար ոսկի պարգև:

Սակայն, ինչպես Խաչատուր Աբովյանն է ասում, նրա որոնողները զոհ դարձան Գալուստի սրին: Նա շատ ճակատամարտերի մասնակցեց, մարտերով հասավ Բոռչալու և անհավասար ճակատամարտերից մեկում զոհվեց՝ հանուն հայ ժողովրդի ազատագրության, որպես մի քաջ ու հերոս աշխարհազորային:

Հայաստանի պետական պատմական թանգարանում պահվում է «Էպիզոդ Գր. Մանուչարյանի հրամանատարությամբ գործող հայկական աշխարհազորային ջոկատի մարտական գործողություններից» նկարը, որի հեղինակն է Հրաչյա Ռուխկյանը: Պահվում է նաև հայ աշխարհազորայինների մարտական դրոշները:

Խաչատուր Աբովյանը շատ բարձր է գնահատում և գովեստով խոսում Մանուչարյանի մասին: Երբ եպիսկոպոսի հայրենի գյուղը պարսիկները քար ու քանդ էին արել և բնակչությանը գերի էին տանում, «Նա երեսուն հոգով մնալ հինգ հազար մարդի մեջ և առյուծի պես իր ժողովրդին ազատեց, նրանց եփրը ետ բերեց: Էս միջոցին Երմոլովն էլ եկավ հասավ... Սա էլ ճակատը համբուրեց ու շատ անգամ խնդրեց, որ իրան ասի, թե ինչ պարգև ա ուզում թագավորիցը բերել տա: Անման եպիսկոպոսն են խնդրեց, որ Շամշադինու, Ղազախի ու Բոռչալվի հայ ազգը թուրքի ձեռիցը ազատվի...

Խնդիրքը կատարվեցավ ու ինքն էլ արքայական պսակին ու թոշակին արժանացավ...»[10]:

Ժամանակի առաջադեմ շատ մարդիկ ըստ արժանվույն ու բարձր են գնահատել Գրիգոր Մանուչարյանի ռազմական ու քաղաքական գործունեությունը ռուս-պարսկական պատերազմի շրջանում՝ որպես հայրենասերի, ազնիվ ու համեստ մարդու, համարձակ ու վճռական հրամանատարի, հասարակական ու քաղաքական գործչի, որը ճիշտ ու ժամանակին հասկացավ, որ առանց ռուս ժողովրդի ռազմա-բարոյական օգնության անհնարին է հայ ժողովրդի ազատագրումը պարսկական ու թուրքական տիրապետությունից:

Նա խիստ դեմ էր այն մարդկանց, որոնք բացասական կարծիք ունեին Ռուսաստանի նկատմամբ և ստորաքարշաբար հայ ժողովրդի ազատագրության հույսը կապում էին եվրոպական պետությունների միջնորդության ու օգնության հետ:

Ավելի քան քառորդ դար Գր. Մանուչարյանն իր սուրը պատյան չդրեց, մինչև պարսից բռնակալների լիակատար վոնդումն ու ջախջախումը հայրենի երկրից: Նա տեսավ ազատագրված Երևանն ու Արևելյան Հայաստանը, նրա տանջված, բայց սրդեն ազատագրված և ուրախացած ժողովրդին, խաղաղ կյանքի ոտք դրած հայ ժողովրդին: Նա իր ջոկատի գլուխն անցած մարտերով անցավ մայր Արաքսը, կանգ առավ Թուրքմենչայում, ներկա եղավ հաղթանակի հանդեսին: Իր ևվիրական ու անգնահատելի ծառայություններով ուրախացրեց ու ոգևորեց տասնյակ հազարավոր մարդկանց: Բարձր գնահատելով ազատությունը, նա դեմ էր ամեն տեսակ բռնության, որի համար էլ նա կռվեց ոչ միայն պարսիկ ու թուրք ջարդարարների, այլև տեղական հարստահարիչների ու դավաճան աղալարների դեմ:

Ռուս-պարսկական պատերազմը վերջանալուց հետո նա իր ջոկատի անդամների հետ միասին վերադառնում է հայրենի Շամշադին, իր սիրելի Հախում գյուղ, և շարունակում ինչպես հոգևոր, այնպես էլ լուսավորական ու տնտեսական աշխատանքները: Վերանորոգում է Նոր Վարագա վանքը, բացել է տալիս եկեղեցական և ծխական դասարաններ և կազմակերպում պատանիներին կրթելու գործը, անձամբ ինքն է պարապում Նոր Վարագա վանքին կից դպրոցում:

Նա հանգիստ չէր ունում նաև խաղաղ ժամանակ: Երբ լսում էր, որ որևէ տեղ թուրք բեկերը կամ աղալարները հեղաշրջում են գյուղացիներին, կամ հողազրկում են նրանց, նա իսկույն մի քանի կտրիճներ էր վերցնում և օգնության հասնում: Հայերը նրան անվանում էին քաջ տեր, «աղա տեր», իսկ թուրքերը՝ «Դալի քեշիշ»: Այս անվանումները տրված են նրա համարձակության, նրա անսպառ եռանդի և վճռականության համար:

Նրան իրավացիորեն անվանում են ժողովրդական մարդ:

Մանուչարյան եպիսկոպոսին շատ բարձր է գնահատել անմահ Խաչատուր Աբովյանը: Նա իր «Ողբ հայրենասերի» գրքում գրել է.

«Էսքան անվանի, էսքան քաջության տեր էր էս օջախը, բայց էլի ով Գրիգոր եպիսկոպոսին տեսներ, հոգին հետը կերթար, էն զարմանալի սրտի տերն էր, քաղցր լեզուն, էն անուշ բնությունն ուներ, երեխի պես կնստեր կպատմեր ինչ գլխովն անց էր կացել, բայց ինչ հարկավոր է բանը երկարացնել: Քանի Կավկազյան սարը կա՝ Մատաթովի ու սրանց արածը հավիտյան կհիշվի կասվի...»[11]:

Նա ոչ միայն հայ ժողովրդի պանծալի զավակներից մեկն է, այլև մի հատուկ հեղինակություն է Բորչալուի, Ղազախի, Շամշադինի հայ և ադրբեջանցի բնակչության համար:

Այդ երախտավոր հոգևորականի, քաջ հրամանատար մարտիկի և փառավոր մարդու աճյունը հանգչում է իր ծննդավայր Հին Հախում գյուղի ս. Հովհաննես եկեղեցում, որի վրա դրված համեստ տապանաքարի վրա գրված է.

«ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՐԻԳՈՐ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ»:

Նա զոհվեց 73 տարեկան հասակում 1846 թ., Տավուշից հայրենի գյուղ գնալու ժամանակ, ճանապարհին՝ դարանակալ թշնամու արձակած գնդակից:

Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանի պանծած կյանքի ու հայրենասիրական դրվագներով լի ուղին դաստիարակչական մեծ դպրոց է հայ սերունդների համար:

---

[10] **Խաչատուր Աբովյան**, Ողբ հայրենասերի, 1959 թ. էջ 137—138:

[11] **Խաչատուր Աբովյան**, Ողբ հայրենասերի, էջ 138: